

Յ Ա Ռ Ա Չ Ա Ք Ա Ն

«Հայ Կեսարիա»ի պատրաստութեան ասեմ Կեսարիոյ առաջնորդներու մէջ Գրիգոր Կեսարացիի պատշոնավարութեան շրջանը ու ժամանակը նշդելու համար, իր կեանքին ու գործերուն ամբողջ ընթացքին հետեւիլ հարկ եղաւ:

Այս պրպտումներու ընթացքին ուշադրութիւնս գրաւեց թէ իր մահուան երեքհարիւրամեակը կը լրանար յառաջիկայ տարի:

Նկատելով որ Գրիգոր Կեսարացի ժեղարուն սկիզբը Հայ Եկեղեցւոյ եւ Ազգին կեանքին մէջ խիստ կարեւոր դեր մը կատարած է, իբր ակոյեան Հայ Եկեղեցւոյ դաւանութեան ընդդէմ օտարոտի ազդեցութեանց եւ խանգարումներու, եւ իր կեանքը պէտք եղածին պէս ծանօթացած չէ հայ ժողովուրդին, յարմար դատեցի իր յիշատակին նուիրել հետեւեալ տողերը, որոնք կը ներկայացընեն հայ բանասերներու ուշադրութեան: